

«Վիկո» ՍՊԸ Ընկերության

ղեկավարության հայտարարությունը ֆինանսական

հաշվետվությունների վերաբերյալ

2025թ. 2-րդ եռամսյակ

«Վիկո» ՍՊԸ-ում հաշվապահական հաշվառումը վարվել է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 30 նոյեմբերի 2011 թվականի թիվ 322-Ն որոշմամբ հաստատված Ներդրումային ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 26 դեկտեմբերի 2017 թվականի թիվ 292-Ն և ՀՀ ֆինանսների նախարարի 19 հունվարի 2018 թվականի թիվ 14-Ն համատեղ որոշմամբ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 30 նոյեմբերի 2011 թվականի թիվ 322-Ն որոշման մեջ կատարված փոփոխությունների և լրացումների, ներդրումային ընկերության կողմից հաստատված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխան:

Ընկերության 2025թ. 2-րդ եռամսյակի հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունները կազմված են ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտների, «Հաշվապահական Հաշվառման մասին» ՀՀ օրենքի, նորմատիվ այլ ակտերին համապատասխան:

Համաձայն «Հաշվապահական հաշվառման» ՀՀ օրենքի Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը սահմանում է հաշվապահական հաշվառման կանոնները, ֆինանսական հաշվետվությունների կազմման եղանակները, ձևերը և սկզբունքները:

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները կազմված են հետևյալ սկզբունքներին համաձայն.

-Անընդհատություն. Ընկերությունը չի պատրաստվում դադարեցնել կամ կրճատել իր գործունեությունը տեսանելի ապագայում;

-Էականություն. Ընկերության ֆինանսական հաշվետվություններում բացահայտված են բոլոր այն տեղեկատվությունները, որոնց չբացահայտումը կարող է ազդել օգտագործողների տնտեսական որոշումներ ընդունելու վրա;

-Հետևողականությունը. Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը չի փոփոխվում հաշվետու ժամանակաշրջանից մյուսը, եթե էական փոփոխություններ չեն տեղի ունեցել ընկերության գործառնությունների բնույթում;

-Հաշվեգրում. տնտեսական գործառնությունների արդյունքները գրանցվում են ճանաչման պահին՝ անկախ դրանց հետ կապված դրամական միջոցների վճարման կամ ստացման ժամկետներից և արտացոլվում են այն ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում, որոնց դրանք վերաբերում են;


-Համադրելիություն. Ընկերության տարբեր ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունները պետք է համադրելի լինեն:

«Վիկո» ՍՊԸ-ի կողմից ընդունված հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն կազմված ֆինանսական հաշվետվությունները ամբողջական են, պարունակում են բավարար ինֆորմացիա օգտագործողների կողմից որոշումներ ընդունելու համար, ճշմարիտ ներկայացնում են ընկերության գործունեության արդյունքները և ֆինանսական վիճակը, բավարարում են ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտների և «ՀՀ հաշվապահական հաշվառման մասին» օրենքի պահանջներին:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություն տեղի չի ունեցել:

Գործադիր տնօրեն

Գլխավոր հաշվապահ



Ի. Բեկյան

Բ. Բաբայան